# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1
ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322)
64109 , bazum.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N 016/70
*16 մարտ 2018թ.*

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 21-Ա, 22-Ա, 23-Ա որոշումները:

Առդիր` 3 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 21-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

Ուժը կորցրած ճանաչել Բազում համայնքի ղեկավարի 2014 թվականի սեպտեմբերի 3-ի <<06-023-0059-0003 ծածկագրի տակ գտնվող հողամասի նկատմամբ Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի իրավունքները վերականգնելու մասին>> թիվ 63-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 22-Ա

## 06-023-0059-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԵՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԵՎ ՎԻՈԼԵՏԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991 թ.-ի թիվ 2 որոշումը, «ՄԵԼ և ՄԻԼ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի » 60-րդ և 64-րդ հոդվածներով , ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Վերականգնել 06-023-0059-0003 ծածկագրի տակ գտնվող 0,1073 հա բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասի նկատմամբ Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի /ծնված1956 թ-ին/ և Վիոլետա Վոլոդյայի Առաքելյանի սեփականության իրավունքը :

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0.1 հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել , իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0.0073 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Սերգեյ Ալեքսեյի Առաքելյանի և Վիոլետա Վոլոդյայի Առաքելյանի սեփականության իրավունքը:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ 5-րդ փողոց, թիվ 33 հողամաս;

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՄԱՐՏԻ 2018թվականի N 23-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, Պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08/04/2004թ. թիվ 458-Ն որոշումով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 57-րդ 60-րդ հոդվածներով և 59-րդ հոդվածի 3-րդ կետով, ՏԻՄ-ի մասին ՀՀ օրենքի 42 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12/04/2001թ. 286 որոշումով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Բազում համայնքում գտնվող և համաձայն ՀՀ Կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշմամբ համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-023-0212-0063 ծածկագրի տակ գտնվող 0.3 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի արոտի նկատմամբ ճանաչել Բազում համայնքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ